ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վանական Կառավարութիւնը Վեհափառ Հայրապետի շնորհաբեր գալստեան մօտալուտ լինելն ի նկատի ունենալով յունիսի սկզբներին միջնորդել էր Սինոդի առաջ վարկ բաց թողնել թէ Էջմիածնում վեհարանը և թէ Բիւրական՝ ամարանոցի շէնքը վերանորոգելու համար։ Սինոդից ստանալով հարկաւոր թոյլտուութիւնը վերանորոգեց թէ վեհարանը և թէ Բիւրականի ամարանոցը։

Յունիսի 28-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Ս. Էջմիածին կայարանը։ Գնացել էին դիմաւորելու Սինոդի ամբողջ կազմը, Վաղարշապատի գաւառապետը, Վաղարշապատի հայ հասարակութեան ներկայացուցիչները և Երևանի պատգամաւորները։ Ցերեկուայ ժամը 3-ին Վեհափառի կառքը կանգնեց Տրդատայ դրան դիմաց գտնուած հրապարակի վրա կանգնեցրած կամարի առաջ, ուր աղ ու հաց մատուցին Վաղարշապատի հասարակութիւնը և Երևանի պատգամաւորութիւնը։ Նորին Վեհափառութիւնը ընդունելով աղ ու հացը պատշաճ խօսքերով յորդորեց օրէնքների սահմանում գործել յօգուտ եկեղեցւոյ և ազգի ապա մտնելով ամպհովանու տակ «Հրաշափառ» շարականի երգակցութեամբ ու հոծ բազմութեան կեցցէների աղաղակներով դիմեց Մայր Տաճար. պատշաճ աղօթքից յետոյ ծընկաչոք համբուրելով Իջման սեղանի առաջ դրուած խաչն ու աւետարանը, մի քանի խօսքով յորդորեց հոգևորականութեան և ժողովրդեան սիրել կարգ, օրէնք և լինել պարտաճանաչ, հեռու վանելով անձնական հաշիւները։ Նոյն հանդիսաւորութեամբ և անվերջ կեցցէների տակ Վեհափառը բարձրացաւ վեհարան։

Երեկոյեան ժամը 7-ին պատրաստուած էր 200 հոգու համար ճաշ, ուր արտասանուեցան ճառեր ու բարեմաղ-

թիւններով։ Վեհափառ Հայրապետը յոգնածութեան պատճառով սեղեանատուն չէր իջել։

Երեկոյեան վանքի բակում ճրագալոյց կար էլէքտրական զանազան գոյնի ճրագներով։

Յունիս 30-ին Վեհափառ Հայրապետին ներակայացան Ս. Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը, Սինոդի ծառայողները, Ճեմարանի վարչութիւնը, զանազան կողմերից եկած պատգամաւորութիւններ։

Վեհափառ Հայրապետին հրաւիրակ կարդուած գերապատիւ Տեարք—Թիֆլիզի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս, Շուշւոյ առաջնորդ Աշոտ եպիսկոպոս և Սինոդի անդամներ Մեսրոպ ու Բաբգէն վարդապետները Վեհափառ Հայրապետի հետ յունիսի 28-ին վերադառնալով Մայր Աթոռ մի քանից յետոյ վերստանձնեցին իրանց պաշտօնները Գարեգին արքեպիսկոպոսը գնալով Թիֆլիզ, Աշոտ եպիսկոպոսը՝ Շուշի, իսկ Մեսրոպ և Բաբգէն վարդապետները՝ յաճախելով Սինոդ։

Վեհափառ Հայրապետի ցանկութեամբ կազմուած է ժամանակաւոր ուսումնարանական յանձնախումբ, որ պէտք է մանրամասն տեղեկութիւններ ժողովի ծխական դպրոցների, ուսուցիչ ուսուցչուհիների մասին և հարկաւոր ղեկուցումներն անի Նորին Վեհափառութեան։

Յանձնախմբի անդամներ նշանակուած են Մեսրոպ, Յուսիկ. Մատթէոս, Գարեգին և Երուանդ վարդապետները։ Մատթէոս վարդապետի բացակայութեան պատճառով նրա տեղ նշանակուեց Ներսէս վարդապետ Տէր Միքայէլեանը։

Մայր Աթոռիս միաբան Տ. Ներսէս վարդապետ Տէր Միքայէլեանը, որ Բաթումի գիմնազիայի գերմաներէնի ուսուցիչ էր, վերադարձաւ Մայր Աթոռ։

Վեհափառ Հայրապետի յանձնարարութեամբ Մինոգը պատրաստում է Ս. Էջմիածնի հաստատութիւնների և տնտեսական վիճակի տեղեկագիրը։

Վեհափառ Հայրապետին մատուցել են նուէրներ։

Կ. Պոլսում—Գալֆայեան որբանոցը սկհոյ մի հատ ոսկեթել ծածկոց որ յանձուեց Ս. Էջմիածնի լուսաբարապետին ի գործադրութիւն տաճարի։

Պ. Տիգրան Տամատեան—Կ. Պոլսում և Աղէքսանդրիայում ապրող հայերի կողմից հին դրամներ—արծաթ՝ քսան հատ, կեղծած՝ երկու հատ, ոսկի՝ մի հատ և պղինձ՝ տասն և վեց հատ նաև պղինձ մատանի՝ մի հատ և մարդակերպ ձուլածոյ կուռք՝ մի. որոնք յանձուեցին Մատենադարան—Թանգարանին։

Մոսկվայում Մ. Տէրեան—արծաթէ մատնատուփ մի հատ և ձեռագիր Համայիլ ԺԸ. դարու։ Այս նուէրներն ևս յանձնուեցին Մատենադարան—Թանգարանին

Վեհափառ Հայրապետի գործածութեան համար մատուցել են Ս. Պետերբուրգում հանգ. Կարապետ Եղեանի քրոջ դուստրները մի արծաթեայ բաժակ և Մոսկվայում՝ պ. Յովհաննէս Ժամհարեանը՝ ծխախոտի մի ոսկեայ տուփ։

Վեհափառ Հայրապետը յանձնեց գանձարանին ի պահ Կ. Պոլսից բերած եպիսկոպոսական պանագիէ չորս հատ, վարդապետական խաչ՝ երկու հատ և քահանայական խաչ՝ մի հատ։

Յուլիսի 16-ին ժամանեց Մայր Աթոռս Փարիզի համալսարանի հայագէտ ուսուցչապետ պ. Ֆրեդերիկ Մակլէր, Մատենադարանում հնագոյն ձեռագիր աւետարանները ուսումնասիրելու համար։

Արարատի խմբագիր Տ. Մատթէոս վարդապետի բացակայութեան պատճառով Արարատի սոյն Յուլիս—Օգոս-

տոս ամսատեսրի հրատարակութեան հսկողութիւնը կատարել է Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսը։

Երևանի պ. նահանգապետ Գրաֆ Տիզէն-Հաուզէն ուղեկցութեամբ պ. Թադէոս Քալանթարեանի յուլիսի 10-ին ժամանելով Մայր Աթոռ՝ այցելեց Վեհափառ Հայրապետին, և վերադարձաւ նախաճաշելուց յետոյ նոյն օրը վերադարձաւ Դարաչիչագ։

Էջմիածնում Յուլիսի մէջ շոգերն անտանելի էին դարձել. բէօմիւրի ջերմաչափը արևի տակ ցոյց էր տալիս 45—46, իսկ սենեակում՝ 26 աստիճան։ Օգոստոսի սկզբին տեղացող անձրևների շնորհիւ եղանակը բաւական զովացաւ։

Նորին Վեհափառութիւնը յուլիսի 11-ին մինեց Բիւրականի ամարանոցը։ Վեհափառ Հայրապետն ազգիս օգոստոսի 17-ին ճաշից յետոյ 6 ժամին Բիւրականի ամարանոցից վերադարձաւ Մայր Աթոռս։

Նորին Սրբութիւնը հրապարակի դարվազայի առաջ իջնելով կառքից ամբողջ միաբանութեան յառաջընթացութեամբ մտաւ տաճար, համբուրեց Ս. Իջման տեղի առաջ դրուած Ս. խաչն ու աւետարանը, աղօթեց և նոյն միաբանութեան յառաջընթացութեամբ բարձրացաւ վեհարան։

Հրապարակից սկսած մինչև տաճարը խմբուած էր խուռն բազմութիւն։

Արձակուրդ են ստացել և բացակայում են Մայր Աթոռից Տեարք Մեսրոպ, Սուքիաս և Յովհաննէս արքեպիսկոպոսները. Սահակ, Բենիկ, Մատթէոս և Երուանդ վարդապետները։

Յուլիսի 6-ին պրոֆեսոր ակադեմիկ Մառը և հնագէտ Յ. Ի. Սմիրնով շրջեցին Վաղարշապատի շուրջը գըտ-

նուած կուրգանները և Մայր աթոռիս թանգարանում գտնուած մի քանի իրեր լուսանկարեցին։

Այս համարում տալիս ենք Վեհափառ Հայրապետի Պոլսից—Էջմիածին ուղևորութեան նկարագիրը, որը ապա լոյս է տեսնելու առանձին գրքոյկով։ Այս նկարագիրը կազմել է Խորէն վարդապետ Մուրադբէկեանը օգուտելով Մշակի և այլ թերթերի մէջ լոյս տեսած նկարագրութիւններից և բարձրապատիւ Գրիգորիս Ծ. վ. Բալաքեանի յուշատետրից։

Յուլիսի 7-ին Մատթէոս վարդապետը ներկայացրեց Նորին Վեհափառութեան գրաւոր հրաժարական «Արարատի» խմբագրի պաշտօնից պատճառելով իր զբաղուած լինելը Իբրև Սինոդի անդամ։

Նորին Վեհափառութիւնը ընդունելով հրաժարականը, խոստացաւ տնօրինել իր օծումից յետոյ։

Իբրև նմուշ «Արարատի» սոյն համարում զետեղում ենք խոյեցոց բարբառով գրուած ընտանեկան նիստուկացը, քաղուած Ս. Էջմիածնի տպարանի գրաշար Յարութիւն Աւշեանի ընդարձակ աշխատութիւնից։ Մեր նպատակն է ծանօթացնել ընթերցողներին մի բարբառի հետ, որով խօսում են Սուրմալուի, Գառնիբասարի և Էջմիածնի գաւառի մի քանի գիւղերի հայերը, որոնք 28 թուին Պարսկաստանի Սալմաստ, Խոյ, Մարաղա և Որմիա գաւառներից են գաղթել։

Ամառը առհասարակ բազմաթիւ ուղևորներ են յաճախում Մայր Աթոռս է որ գիտնական նպատակով և է, որպէս պարզ ճանապարհորդներ։

Այսպէս այցելեցին Մայր Աթոռս մի խումբ ուսանողներ և ուսանողուհիներ, Նոր Նախիջևանի թեմական

գպրոցի բարձր դասարանների աշակերտները ուսուցիչ Գէորգ սարկաւագի ղեկավարութեամբ, երեք գերմանացիներ, որ մի քանի օր մնալով այստեղ հետաքրքրւում էին Մայր Աթոռիս հնութիւններով և մտադիր էին Արարատ բարձրանալ։

Օգոստոսի 1-ին Դբսուհի Բօհան և իշխանուհի Միւրատ այցելեցին Մայր Աթոռս և նոյն օրը վերադարձան Երևան՝ Սևան ուղևորելու համար։

Վեհափառ Հայրապետի Մայրաքաղաքներում գտնուելու յիշատակը յաւերժացնելու համար մայրաքաղաքների հայերը որոշել են նոր վեհարան կառուցանելու համար տալ Ս. Պետերբուրգի Հայ Եկեղեցական խորհուրդը տասն հազար ռուբլի և Մոսկվայի հայերը՝ մօտ տասն և հինգ հազար ռուբլի՝ հանգանակութեամբ։